# Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի ԹԻՎ ԹԻՎ 12-Ա, 13-Ա, 14-Ն, 15-Ա ԵՎ 16-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 14-Ն որոշման մեջ կատարված համարակալումը սխալ է:

Թիվ 15-Ա որոշման վերնագիրը չի համապատասխանում բովանդակությանը:

Որոշմամբ հաստատված հավելվածի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի 2020 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարողականը եկամտային մասով» բաժնում՝

1) «Այլ դոտացիաներ» 12-րդ տողի «Տարեկան պլանը» սյունակում լրացնել «156.0» թիվը:

2) «Ընդամենը եկամուտներ» տողի «Տարեկան պլանը» սյունակում նշված «34,441.1» թիվը փոխարինել «34,597.1» թվով:

3) «Ընդամենը եկամուտներ» տողի «Կատարման տոկոս» սյունակում լրացնել «95.6» թիվը:

Որոշմամբ հաստատված հավելվածի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի 2020 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարողականը ծախսային մասով» բաժնում՝

1) «Էներգետիկ ծառայություններ /4212 հոդված/» տողի «Տարեկան պլանը» սյունակում նշված «1,300.0» թիվը փոխարինել «1,450.0» թվով:

2) «Կոմունալ ծառայություններ /4213 հոդված/» տողի «Տարեկան պլանը» սյունակում նշված «2,800.0» թիվը փոխարինել «3,000.0» թվով:

3) «Պահուստային միջոցներ /4891 հոդված/» տողի «Տարեկան պլանը» սյունակում նշված «2,642.7» թիվը փոխարինել «2,448.7» թվով:

4) «Ընդամենը վարչական բյուջե» և «Ընդամենը ծախսեր» տողերի «Տարեկան պլանը» սյունակում նշված «34,441.1» և «39,623.6» թվերը համապատասխանաբար փոխարինել «34,597.1» և «39,779.6» թվերով:

Որոշմամբ հաստատված հավելվածի «2020 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարողականը ծախսային մասով, ըստ գործառնական դասակարգման» բաժնում՝

1) «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում /Բաժին 1, Խումբ 1, Դաս 1» տողի «Վարչական բյուջե» սյունակում նշված «18,060.0» թիվը փոխարինել «18,210.0» թվով:

2) «Աղբահանում /Բաժին 5, Խումբ 1, Դաս 1» տողի «Վարչական բյուջե» սյունակում նշված «2,740.0» թիվը փոխարինել «2,940.0» թվով:

3) «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ /Բաժին 11, Խումբ 1, Դաս 2» տողի «Վարչական բյուջե» սյունակում նշված «2,642.7» թիվը փոխարինել «2,448.7» թվով:

4) «Ընդամենը» տողի «Վարչական բյուջե» սյունակում նշված «34,441.1» թիվը փոխարինել «34,597.1» թվով:

Թիվ 16-Ա որոշման նախաբանում հղումը պետք է կատարվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի ոչ թե 11-րդ կետին, այլ՝ մասին: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի 2018 թվականի մարտի 17-ի թիվ 7-Ն որոշմանը հղում կատարելիս, անհրաժեշտ է նշել որոշմամբ սահմանված կարգի համապատասխան կետի, ենթակետի կամ պարբերության համարը:

Որոշումներում կիրառվել են կրճատ գրառված բառեր: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի՝ արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ:

*Կատարող՝ Ն.Մարտիրոսյան*
*07.05.2020թ.*